ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու

ԿԱՄԲԵՃԱՆ ԳԱՎԱՌԻ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ինչպես Մեծ Հայքի հյուսիս-արևելյան մի շարք նահանգների, այնպես էլ Կամբեճան գավառի պատկանելիության խնդիրը գտնվել է պատմաբանների սնեռուն ուշադրության կենտրոնում:

Խորհրդային իշխանության գոյության ամբողջ տարիներին, ունենալով ԽՍՀՄ ժողովուրդների պատմության համահարթեցմամբ զբաղվող խորհրդային կենտրոնական մարմինների խրախուսանքը, վրացի ու ադրբեջանցի պատմաբաններն իրենց աշխատություններում Վրաստանի և Աղվանքի պատմությունը շարադրել են արհեստականորեն ուռճացված սահմաններով՝ փորձելով հավակնություններ ներկայացնել հարևան պետությունների՝ մասնավորապես Մեծ Հայքի թագավորության տարածքների նկատմամբ: Սակայն, ինչպես ցույց են տալիս հունա-հռոմեական և հայկական սկզբնաղբյուրները, Կամբեճան գավառը եղել է Մեծ Հայքի անբաժան մասը:

Կամբեճան գավառի մասին առաջին հաղորդումը պատկանում է Ստրաբոնին, ըստ որի՝ «Հայաստանը մասամբ իրենից ներկայացնում է հարթավայր, մասամբ էլ լեռնային երկիր, ինչպիսին է Կամբեճանը, որտեղ հայերը սահմանակից են միաժամանակ իբերների և աղվանների հետ»[1]: Մեկ այլ առիթով

---

[1] Страбон, География, пер., статья и коментарии Г. А. Стратановского, М., 1964, (այսուհետև՝ Страбон), XI, IV, I. Տե՛ս նաև՝ Ստարաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը, Օտար աղբյուրները հայերի մասին, «Հունական աղբյուրներ», N 1, Երևան, 1940, էջ 35–37: Հակառակ Ստրաբոնի՝ վերը նշված հաղորդում-

հույն հեղինակը գրում է. «Անցումը Իբերիայից Աղվանք ձգված է Կամբեճանի անջուր և քարքարոտ գավառով դեպի Ալազան գետը»[2]: Երրորդ անգամ Ստրաբոնը Կամբեճանին անդրադառնում է Հայաստանի նկարագրության մեջ. «Հայաստանի ծայրագավառներից է Փավենեն, ինչպես Կոմիսենեն և Օրքիստենեն...: Խորձենեն և Կամբեջանը ամենից հյուսիսայիններն են և առավել ձյունառատ, որոնք սահմանակցում են Կովկասյան լեռներին, Իբերիային և Կոլխիդային»[3]:

Այսպիսով՝ Ստրաբոնը երեք անգամ անդրադառնալով Կամբեճանին, երկու անգամ այն նկարագրում է որպես Հայաստանի գավառ, իսկ երրորդ անգամ նշում, որ նրա վրայով է ձգվում Իբերիա – Աղվանք ճանապարհը[4]: Ելնելով Ստրաբոնի հաղորդումներից՝ միանգամայն հստակ կարելի է ասել, որ պատմական Հայաստանի այս գավառը գտնվել է Կուր գետից հյուսիս՝ Աղվանքի և Իբերիայի մեջտեղում:

Կամբեճանի պատկանելիության մասին տեղեկություններ ենք գտնում նաև Պլուտարքոսի և Դիոն Կասսիոսի աշխատություններում: Պոմպեոսը դեպի Աղվանք արշավելիս անցել է

ների՝ Դ. Մուսխելիշվիլին, «հենվելով» Ստրաբոնի այս հաղորդման վրա, նշում է. «Այդ տեղեկության արժեքը կայուն է այնքանով, որ պարտադրում է պատկերացնել թե Արևելա-Վրացական ցեղերը մ.թ.ա. I դարից մի քանի դար առաջ խորացել էին Կամբեճանի հյուսիսարևելյան մասում» (տե՛ս Мусхелишвили Д., Из исторической географии восточной Грузии (Шаки и Гогарена), с. 18): Այդ հաղորդման մեջ Ստրաբոնն ընդհանրապես չի հիշատակում վրացական ցեղերին: Բայց Դ. Մուսխելիշվիլին, փորձելով հող նախապատրաստել իր համար շահեկան եզրակացության համար, նախ Կամբեճանի մի մասը, ապա գավառն ամբողջությամբ հայտարարում է վրացական տարածք, թեպետ սկզբնաղբյուրներում չկան համապատասխան հաղորդումներ:

[2] Страбон, XI, IV, 5.

[3] Նույն տեղում, XI, XIV, 4:

[4] Մնացականյան Ա., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 49–50:

Կամբեճանով և հետո միայն Ալազան գետի մյուս ափին, ինչ-որ տեղ հանդիպել աղվանական բանակին[5]: Հարց է ծագում, եթե գավառը պատկանում էր Աղվանքին, ապա ինչու՞ աղվանները չէին պաշտպանում այն և հռոմեացիներին թողնում են անարգել անցնել դրա միջով: Կարծում ենք, որ Կամբեճանը Հռոմի «բարեկամ և դաշնակից» Մեծ Հայքի տարածքն էր, և լեգեոնները անարգել անցել են գավառով ու Ալազանն անցնելուց հետո միայն շփման մեջ մտել աղվանների հետ:

Ըստ VII դարի հայկական «Աշխարհացոյց»-ի, Կամբեճանն Աղվանքի գավառներից էր: Թվարկելով երկրի գավառները, Անանիա Շիրակացին Եխնի (Խենի) գավառից հետո նշում է՝ «Եւ Քամբէճան առ Կուրաւ»[6]: Սակայն ինչպես վերը տեսանք, այլ աղբյուրները, այդ թվում և անտիկ շրջանի, Կամբեճանին վերագրում են այլ պատկանելիություն:

Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, որ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ում Կամբեճան գավառը հիշատակվում է Աղվանքի գավառների շարքում, ապա դա բացատրվում է այն հանգամանքով, որ «Աշխարհացոյց»-ը գրվել է VII դարում, իսկ Կամբեճանը Մեծ Հայքի կազմում եղել է մինչև V դարի կեսերը[7]: Աշխարհագրական այս իրողությունն էլ արձանագրել է Անանիա Շիրակացին՝ իր վերոհիշյալ հաղորդմամբ: Իսկ որ դա այդպես է եղել, ցույց է տալիս Ղևոնդ պատմիչն ուշ ժամանակների իրադարձությունները մատնանշելիս՝ Կամբեճանը համա-

---

[5] Плутарх, Сравнительные жизнеописания. Помпей, т. II, М., 1963, XXXV, Դիոն Կասիոս, Հռոմեական պատմություն, թարգ. բնագրից, առաջաբանը և ծանոթ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1976, XXXVII, III, 6:

[6] «Աշխարհացոյց» Մովսես Խորենացւոյ յալելուածովք նախնեաց (այսուհետ՝ Աշխարհացոյց), Վենետիկ, 1881, էջ 29:

[7] Վարդանյան Ա., Աղվանքը մ.թ.ա. I – մ.թ. VI դդ. (Պատմաշխարհագրական քննություն), «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2010, էջ 14:

ռելով Աղվանքի գավառներից: Նա գրում է՝ «(Խազարները – *Ա. Կ.)* սփռեալ զասպատակս իւրեանց, ըստ հիւսիսոյ գետոյն հզօրագունի, որ կոչի Կուր՝ առնուին բազում գաւառս զՀէջար, զՔաղա, զՈստանի, զՄարզպանեան[8], զՀաբանդ, զԳեղատու, զՇաքէ, զԲեխ, զԽենի, զԿամբեխճան, զԽողմաղ»[9], շեշտելով, որ թվարկված գավառներն Աղվանից աշխարհում են: Ինչպես կտեսնենք ստորև, Աղվանից մարզպանության տրոհումից հետո Կամբեճանը գտնվել է հայ իշխանական ընտանիքների տիրապետության ներքո:

Հետագա ուսումնասիրողները միակարծիք չեն Կամբեճանի պատկանելիության հարցում: Գերմանացի հայագետ Հ. Հյուբշմանը, ելնելով աղբյուրների մանրակրկիտ քննությունից, գտնում է, որ Կամբեճանը «Հայաստանի ամենեն հյուսիսային ծյունաշատ մեկ տեղն էր...»[10]: Ա. Մնացականյանն ու Բ. Ուլուբաբյանը գավառը տեսնում են Մեծ Հայքի կազմում[11]: Հենվելով Ստրաբոնի վերը հիշատակված տեղեկությունների վրա՝ Ա. Տեր-Ղևոնդյանը փաստում է. «Կամբեճանը եղել է հայ Արշակունիների թագավորության մի մասը և նրա բնակչությունը հայկական է եղել»[12]: Հ. Սվազյանը գտնում է, որ մինչև մ.թ. II դարը Կամբեճանը մաս է կազմել Մեծ Հայքին, ապա անցել է Աղվան-

---

[8] Ստ. Կանայանցն առաջարկում է այս երեք անվանումները կարդալ որպես մեկ գավառի անուն՝ Քաղաղա Ոստան ի Մարզպանեան (տե՛ս Կանայեանց Ստ., Անյայտ գաւառներ հին Հայաստանի, էջմիածին, 1914, էջ 172):

[9] Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 132:

[10] Հյուբշման Հ., Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմանեց Հ. Բ. Պիլէզիկճեան, Վիեննա, 1907, էջ 18–19:

[11] Մնացականյան Ա, նշվ. աշխ., էջ 48–55, Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, (V–VII դդ.), Երևան, 1981, էջ 31:

[12] Ter-Ghevondian A., Notes sur le Šakē-Kambečan (Iᵉ–XIVᵉ s). Տեր-Ղևոնդյան Ա., Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 673:

քին[13]: Ա. Հակոբյանը գավառը համարում է Աղվանից թագավորության մաս[14]: Գ. Ստեփանյանը Կամբեճան գավառը համարում է Մեծ Հայքի թագավորության մաս[15]: Հ. Խորիկյանը վերջերս լույս տեսած իր աշխատանքում գտնում է, որ Կամբեճանը մ.թ.ա. I (գուցե II դարից) – մ.թ. I դարերում է գտնվել Հայաստանի կազմում: Եվ շարունակելով եզրակացնում, որ II դարում Կամբեճանը անցնում է Աղվանքին[16]: Գ. Մելիքիշվիլին և Դ. Մուսխելիշվիլին կարծում են, որ գավառը բաժանված է եղել երեք հարևանների միջև[17]: Ի դեպ, հետագա աշխատանքներում վրաց հեղինակները նախ գտնում են, որ Կամբեճան գավառը մինչև մ.թ.ա. III դարը չէր կարող չպատկանել Վրաստանին, քանի որ այդ ժամանակաշրջանը համարում են Վրացական թագավորության շրջան, ապա շարունակելով՝ գրում են. «Կամբեճանը Հայաստանի նահանգ դարձավ վերջինիս հզորացման ժամանակաշրջանում՝ մ.թ.ա. II – մ.թ.ա. I դարերի կեսերին»[18]: Ադրբեջանցի հեղինակները և, մասնավորապես, Ֆ. Մամեդովան ինչպես սահմանային մյուս հարցերում, այնպես էլ Կամբեճանի խնդրում, առանց հաշվի առնելու անտիկ հեղինակների հաղորդումները, գավառը հայտարարում է «աղվանական մարզ»[19]:

---

[13] Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Երևան, 2006, էջ 70:

[14] Տե՛ս Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, էջ 28–30:

[15] Տե՛ս Ստեփանյան Գ., Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, 2010, էջ 6, ծան. 2:

[16] Տե՛ս Խորիկյան Հ., Աղվանից մարզպանության վարչական բաժանումներն ըստ «Աշխարհացույց»-ի, «Մերձավոր և միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXVIII, Երևան, 2011, էջ 72:

[17] Տե՛ս Меликишвили Г., К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 123, Мускелишвили Д., նշվ. աշխ., էջ 19:

[18] Տե՛ս "Очерки истории Грузии", т. I, Тбилиси, 1989, с. 270.

[19] Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании, Баку, 1986, с. 93–94.

Այս առումով, նախ, ճիշտ չենք համարում վրաց հեղինակների տեսակետը, քանի որ Գ. Մելիքիշվիլին Կամբեճանը սկզբնապես համարում էր վրացական, ապա, իբր թե, Տիգրան II-ը այն նվաճել է վրացիներից: Շարունակելով զարգացնել իր միտքը՝ նա գրում է. «Նշանավոր Տիգրան II-ից հետո Հայաստանը թուլացավ...: Դրան համապատասխան հայկական իշխանությունն այդ գավառի վրա, ըստ երևույթին, մոտենում էր իր վախճանին, իսկ քարթլիները (վրացիները – *Ա. Կ.*) ամրապես տիրում են նրան (Կամբեճանին – *Ա. Կ.*)»[20]: Այս տեսակետը, սակայն, քննադատության չի դիմանում, քանի որ, ինչպես ցույց տվեցինք, մեր թվարկության սկզբում Ստրաբոնը Կամբեճանը ճանաչում է Մեծ Հայքի մաս[21]: Նրա այս տեղեկության հիման վրա է Ա. Մնացականյանը Կամբեճանի զբաղեցրած տարածքն անվանում Անդրկուրյան Հայք, որը «Իրենից ներկայացնում է այն աշխարհագրական վայրը, որով Հայաստանը շփվում է Վրաստանի և Աղվանքի հետ: Ուստի և պատմական Հայաստանի այս գավառը ոչ այլ ինչ է, քան Անդրկուրյան Հայքի մի ընդարձակ մաս»[22]:

Հնարավոր չենք համարում նաև Խորձենե - Կղարջքի շրջանում մեկ այլ Կամբեճանի գոյությունը, որին իբր թե վերաբերում է Ստրաբոնի հաղորդումը[23]:

Իսկ ինչ վերաբերում է այն տեսակետին, թե Կամբեճանը մինչև մ.թ.ա. III դարը գտնվել է Վրաստանի կազմում, ապա դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ սկզբնաղբյուրներում այդպիսի հաղորդում չկա:

Ֆ. Մամեդովան, իրեն հատուկ ձևով, այն է՝ կամայական մեկնաբանություններով ինչ-որ դեպքեր յուրովի բացատրելով

---

[20] Меликишвили Г., նշվ. աշխ., էջ 127:
[21] Տե՛ս Страбон, XI, IV, I; XI, IV, 5; XI, XIV, 4:
[22] Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ 50:
[23] Տե՛ս Акопян А., նշվ. աշխ., էջ 29–30:

փորձում է Կամբեճանի պատկանելիությունը լուծել հօգուտ Կովկասյան Ալբանիայի[24]:

Ընդունելի չէ նաև Հ. Սվազյանի տեսակետը, ըստ որի մ.թ. II դարում հռոմեացիներն Այսրկովկասում կատարեցին վարչական փոփոխություններ և Կամբեճանն անցավ Աղվանքին[25]:

Իսկ ինչ վերաբերում է Հ. Խորիկյանի տեսակետին, ապա գտնում ենք, որ մ.թ. I դարում Կամբեճանը չէր կարող անցնել Աղվանքին, քանի որ այդ ժամանակահատվածում ապրած և ստեղծագործած հույն աշխարհագրագետ Ստրաբոնն իր աշխատությունում Կամբեճան գավառը համարում է Մեծ Հայքի մաս:

Աղբյուրների քննությունից ելնելով՝ կարելի է նշել, որ Կամբեճան գավառը հայկական պետականության ողջ ընթացքում և մինչև V դ. երկրորդ կեսը եղել է Մեծ Հայքի կազմում ու նրանից դուրս է եկել այն ժամանակ, երբ տարածաշրջանում ստեղծվեց նոր վարչական միավոր՝ Աղվանից մարզպանությունը: Վերջինիս տրոհումից հետո, արաբական տիրապետության ժամանակաշրջանում Կամբեճանի հայությունը հիմնականում ենթարկվում էր Հայոց Արևելից կողմանց իշխանական տներին[26]:

IX դարում գավառը գտնվում էր Առանշահիկների իշխա-

---

[24] Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании, с. 137–143.

[25] Սվազյան Հ., նշվ. աշխ., էջ 70:

[26] Տե՛ս Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 31: Իրավացի է Բ. Ուլուբաբյանը՝ նշելով, որ հայ իշխանների տիրապետության տակ եղած Աղվանից աշխարհը Հայոց Արևելից կողմանց երկու նահանգներն էին՝ հյուսիսում Կուր գետի սահմանով և Կամբեճան գավառի ընդգրկումով (տե՛ս Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ. էջ 246): Կամբեճան գավառի մասով հեղինակները հիմնականում հիմնվում են Մովսես Կաղանկատվացու տեղեկության վրա. «... ի սահմանս յայնկոյս գետոյն Կուրայ ի Կամպիճանն գաւառ» (տե՛ս Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԹ, էջ 178):

նապետության ներքո: Առանշահիկ Սահլ Սմբատյանի[27], մանավանդ նրա թոռ Գրիգորի իշխանության օրոք վերստին այդ տոհմին է անցնում անդրկուրյան Կամբեճանը[28]:

X դ. սկզբին Հայոց Արևելից կողմերում Համամ իշխանի ջանքերով ստեղծվում է թագավորություն. «Ապա բարեպաշտն Համամ որ և Աղուանից եղև թագաւոր, նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանս Աղուանից նորոգեաց, որպէս Աշոտ Բագրատունի՝ զՀայոց թագաւորութիւնն»[29]: Համամի ստեղծած թագավորությունը որոշ ժամանակ անց բաժանվում է նրա որդիների միջև: Ատրներսեհին[30] բաժին է ընկնում Շաքե-Կամբեճանը, որի մասին արաբ պատմիչ Մասուդին վկայում է. «Շաքեցիների թագավորը Ադրներսե իբն Համամն է»[31]:

Համամ Բարեպաշտի ստեղծած թագավորությունը ժամանակի հայ պետական կազմավորումներից մեկն էր և ընդգրկված էր Բագրատունյաց Հայաստանի գերագույն իշխանության ներքո գտնվող ֆեոդալական համակարգի մեջ:

Կամբեճան գավառի տեղադրությունն Անդրկուրյան Հայքում ուսումնասիրողների մոտ տարակարծությունների տեղիք չի տվել: Գավառն Աղուան (Ալազան) գետով սահմանակից էր Եխնի և Բեխ գավառներին, իսկ արևելքից՝ Գետառու գավառին: Կամբեճան և Գետառու գավառների հատման կետում գտնվում էր Գվգավ քաղաքը: Հարավից գավառը Կուր գետի երկարությամբ սահմանակցում էր հայկական Ուտիքին, իսկ

---

[27] Տե՛ս Եղիազարեան Ա., Աղուանից թագաւորութեան պատմութեան որոշ խնդիրների շուրջ, «Հանդէս Ամսօրեայ», 2009, թիւ 1–12, էջ 154:

[28] Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 87:

[29] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, Գ, գլ. ԻԲ, էջ 335:

[30] Համամի որդի Ատրներսեհը սկսել է իշխել 910 թ. (տե՛ս Բ. Ուլուբաբյան. Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Երևան, 1975, էջ 82):

[31] СМОМПК, вып. 38, с. 57.

հյուսիս-արևմուտքում՝ Վիրքին: Գավառի մեծ մասն իր բնակլիմայական պայմանների պատճառով անմարդաբնակ է եղել, քանի որ, ըստ «Աշխարհացոյց»-ի տեղեկության, Կուդրաթ գյուղաքաղաքից «Վայրքն անապատ մինչեւ ցԿուր գետ...»[32]:

Ելնելով այս հաղորդումից՝ վստահորեն կարելի է ասել, որ գավառի բնակչության հոծ զանգվածները կենտրոնացած են եղել Կուր գետի և գավառի միջով հոսող Կամբեճ գետի շրջակայքում: Կամբեճանի բնակչության գերակշիռ մասն Անանիա Շիրակացու օրերում եղել են հայերը: Դա հաստատվում է նաև IX դ. վրաց մատենագիր Արսեն Սափարացու հաղորդած տեղեկություններով, պատմիչը, խոսելով VII դ. հայ մատենագիր Հովհան Մայրավանեցու գործունեության մասին, նշում է. «Ապա նա փախուստի դիմեց դեպի Կովկասյան լեռները... Լեռնականները նրան չէին ընդունել, քանի որ վերջիններս կռապաշտներ էին, և անցավ Կամբեչ[ով]ան՝ տիրելով փոքր ձորին, որ Հայոց (Սոմխեթի) ձոր է կոչվում...»[33]: Ասվածից պարզ երևում է, որ VII դարում ևս Կամբեճանը հայաբնակ էր, ու նրա ձորերից մեկը կոչվում էր Հայոց ձոր[34]:

Այս հարցի կապակցությամբ բոլորովին այլ վարկած է առաջադրում Դ. Մուսխելիշվիլին: Նա ձգնում է ապացուցել, որ Կամբեճանում Արսեն Սափարացու հիշատակած «Հայոց ձորը» ոչ թե բնակավայր է, այլ կիրճ[35]: Ապա շարունակելով, վրաց հեղինակը վերափոխում է պատմիչների հաղորդումը՝ նշելով. «Կամբեճանում բացակայում էր հայ բնակչությունը, լավագույն դեպքում փոքրամասնության տեսքով էր, քանի որ Արսեն Սափարացին նշում է, որ «Հայոց կիրճը» Կամբեճանում

---

[32] «Աշխարհացոյց», էջ 29:
[33] Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի ու հարևան երկրների մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 46–47:
[34] Տե՛ս Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ 53:
[35] Տե՛ս Мусхелишвили Д., նշվ. աշխ., էջ 27:

«փոքր կիրճ էր»»[36]: Նախ, ինչպես վերը տեսանք, Արսեն Սափարացին հիշատակում է ոչ թե «Հայոց կիրճ», այլ «Հայոց ձոր», իսկ Կամբեճանում հայ բնակչության վերաբերյալ վրաց մատենագիրը ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

Կամբեճանը հայաբնակ էր նաև հետագա դարերում: Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին X դ. կեսերին ուղևորվում է Հայոց Արևելից կողմերը. «...մաքրել զընծիւղեալ աղանդ Քաղկեդոնի, որ յաշխարհիս Հայոց»[37]: Կաթողիկոսը հանգրվանում է Հերեթի կողմերում, իսկ «Հերեթ» ասելով հասկացվում է Կամբեճան գավառը[38], որտեղ թագավորում էր քաղկեդոնական դավանանքի անցած Իշխանիկը, որի իշխանության սահմանները Կամբեճանից հասնում էին Խաչեն. «Ծագեաց ի սիրտս հզօրացն Աղուանից ի թագաւորն, որ կոչէր Իշխանակ՝ որդի տեառն Ատրներսէհի, և Սենիքերիմայ Աղուանից իշխանաց իշխանի, և նորին ամուսնոյ, և քեռ նորին և տեառն Սենիքերիմայ՝ որդոյ Գրիգորի Խաչեան իշխանի և Տեառն Վաչագանայ Գորոզուաց իշխանի և այլ բազում մեծամեծաց...»[39]:

Կամբեճան գավառի բնակչության մեծամասնությունը մինչև XV դարը կազմել են հայերը[40]:

Գավառը սկզբնաղբյուրներում հանդիպում է նաև «Անդրկուրյան Հայք», «Փոքր Հայք» անվանումներով: Այդ մասին կարևոր վկայության ենք հանդիպում «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ. «Քավաղակ քաղաք Աղուանից մերձ ի Կաւկաս ընդ որոյ մէջ գետն Սէբոջ դէպ ի հարաւոյ ըստ

---

[36] Նույն տեղում:

[37] Անանիա Մոկացի, Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ տուրք Լուսաւորչի աթոռոյն (այսուհետև՝ Մոկացի), «Արարատ», մարտ 1897, էջ 144:

[38] Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ 211:

[39] Մոկացի, էջ 144:

[40] Տե՛ս Ter-Ghevondian A., նշվ. աշխ., էջ 678–679:

փոքր Հայոց»[41]: Այսինքն՝ Անանիա Շիրակացուն հայտնի է Կուր գետից հյուսիս, Աղվանից աշխարհի սահմաններում «Փոքր Հայք» կոչվող մի տարածություն, որի սահմաններից մեկը Սեբոջ գետն է[42]: Եվ «Փոքր Հայք» կոչվող տարածությունը Կամբեճան գավառն է՝ Աղվանքի հարավ-արևմտյան սահմաններում: Կամբեճան գավառի ընդհանուր տարածությունն էր շուրջ 7510 կմ^2[43]:

Գավառի մի շարք բնակավայրերում հայկական եկեղեցիները մահմեդականների կողմից ենթարկվել են ավերածությունների: Այդ առիթով Մ. Բարխուտարյանցը գրում է. «Վերնայարկն ըստ ամենայնի ունի Հայաստանեայց տաճարների բոլոր յատկութիւնները: Կամարներն շինուած են կոփածոյ չիչ քարով»[44]:

Այսպիսով՝ ինչպես վերը նշել ենք, Կամբեճան գավառը Մեծ Հայքի թագավորության գոյության ընթացքում եղել է նրա անբաժան մասը և միայն 461 թ., երբ ստեղծվեց Աղվանից մարզպանությունը[45] Կամբեճան գավառը կարճ ժամանակահատվածով միացավ Աղվանքին: Սակայն մարզպանության տրոհման հետևանքով գավառը վերստին անցավ հայ իշխանական ընտանիքների տնօրինության ներքո:

---

[41] «Աշխարհացոյց», էջ 29:

[42] Տե՛ս Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ 56:

[43] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրության հիմքի վրա), Երևան, 1963, էջ 57, 120:

[44] Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, Երևան, 1999, էջ 139:

[45] Տե՛ս Վարդանյան Ա., Աղվանից մարզպանության կազմավորումը, «ԼՀԳ», 2010, թիվ 1–2, էջ 101–106:

АРГИШТИ ВАРДАНЯН
кандидат исторических наук

К ВОПРОСУ О ПРИНАДЛЕЖНОСТИ ПРОВИНЦИИ КАМБЕЧАН

РЕЗЮМЕ

Как явствуют греко-римские и армянские первоисточники, провинция Камбечан входила в состав государства Великая Армения. Страбон, трижды упоминая о Камбечане, дважы описивал его как армянскую провинцию. О принадлежности провинции находим информацию в трудах Плутарха, Диона Кассия, Анания Ширакаци и Гевонда. В 461 г. в результате образования Агванкского марзпанства Камбечан на протяжении короткого исторического отрезка была присоединена к Агванку. Однако в результате раздробления марзпанства провинция Камбечан вновь оказалась под властью армянских княжеских фамилий и была (подвластной верховной власти) частью феодальной системы Багратидской Армении.

ARGISHTI VARDANYAN
PhD in History

ON THE PROBLEM OF KAMBECHAN PROVINCE BELONGING

SUMMARY

As the Greek-Roman and Armenian primary sources testify, Kambechan province was part of the state of Great Armenia. In 461, though, it was annexed to Aghvank as a result of the formation of Aghvank region. However, as the region was divided again, Kambecha appeared under the rule of Armenian princely dynasties and made a part of the feudal system of the Bagrationi Armenia.